

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐԷՐԵՆԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ
ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կրկնությունը լեզվական որևէ տարրի (միավորի) հնչյունի, արմատի, բառի, դարձվածքի, գրավոր տեքստում նաև տառի, կրկնակ (երկու, երբեմն ավելի) գործածումն է, մեկից ավելի արտասանությունը արտասանական, բառակազմական, իմաստաբանական, քերականական կամ ոճական նկատառումներով: Ըստ այդմ լինում են *կրկնակ հնչյուններ կրկնահնչյուններ, արմատակրկնություններ, քերականական կրկնություններ, ոճական կրկնություններ* և այլն:¹

Ժամանակակից թուրքերենի բառակազմական արդյունավետ միջոցներից է արմատակրկնությունը: Արմատակրկնությունը բառակազմական հիմնական միջոցներից է: Առավել և հաճախական են բառակրկնությունները, որոնք առավելապես, որպես բառակազմական միջոց գործադրվում են խոսքիմասակազմության պլանում: Ըստ այդմ լինում են կրկնավոր գոյական, կրկնավոր ածական, կրկնավոր մակբայ, կրկնավոր ծայնարկություն:

Թեև թուրք լեզվաբաններն անդրադաձել են թուրքերենի կրկնություններին, կրկնավոր բառակապակցություններին, սակայն դեռևս այսօր էլ նրանց ուսումնասիրություններում չկան հստակ սահմանումներ, տարանջատումներ և նույնիսկ տերմինների խնդրում դեռևս չկա միասնական մոտեցում:

Իսկ հայ լեզվաբանական միտքը վաղուց է սահմանել հարադիր բարդությունների, կրկնությունների իմաստա-քերականական, կառուցվածքային, շարահյուսական առանձնահատկությունները², որոնք հիմք են հանդիսացել մեր վերլուծությունների հատկապես նպաստելով սույն հոդվածում թուրքերեն կրկնությունների, կրկնավոր բարդությունների հայերեն համարժեքները վեր հանելու համար:

Նշենք նաև, որ թուրքերենի կրկնությունների դրսևորումները քննել են նաև խորհրդային թուրքագետ-լեզվաբանները³, որոնց առաջ քաշած դրույթ-

¹ Գ. Չ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 309-310:

² Է. Բ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, տես նաև՝ Ս. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 167-184:

³ Բ. Ա. Аганин, Повторы и однородные сочетания в современном турецком языке, Москва, 1959, տես նաև В. А. Гордлевский, Грамматика турецкого языка,

ներն ու սահմանումները ևս կարևորվել են մեր սույն ուսումնասիրության համար:

Խորհրդային թյուրքագետ-լեզվաբանները ժամանակակից թուրքերենում առանձնացնում են արմատակրկնության հետևյալ տիպերը *լրիվ կրկնություն* (полный повтор), *փոխակերպումներ* (трансформированные повторы), և *սղված* (усеченный повтор) *կրկնություններ*, որոնք ընդունված մաս անվանել *մասնակի կրկնություններ* (частичная редубликация)⁴:

Լրիվ կրկնությունը իրականանում է բառի և այն կազմող ձևաբանական մասնիկների պարզ կրկնությամբ: Այսպես օրինակ, *abal abal-դանդաղ-դանդաղ, abaz abaz yürütek -արագ-արագ մեծ քայլերով քայլել, abcal abcal yürütek -բաղի պես քայլել, acele acele-հապշտապ, afal afal- ցրված, անօգնական, gere gere- հույս ունենալ, gergin gergin-անհանգիստ-անհանգիստ, öbel öbel-դանդաղ-դանդաղ, söğek söğek-մեջք մեջքի*:

Փոխակերպված կրկնությունները (թուրքերենում դրանք խմբավորվում են *ilaveli tekrarlار* տերմինի տակ), ծագելով *լրիվ կրկնություններից*, տարբերվում են իրենց նախնական ձևից երկրորդ բաղադրիչի որակական այլ հատկանիշով, որը հանդիսանում է ռիթմիկ արծազանքը: Կրկնության այս ձևը թուրքերենում շատ տարածված է և միևնույն ժամանակ շատ բնորոշ: Որոշ թուրք լեզվաբաններ հակված են կարծելու, որ կրկնության այս ձևը հատուկ է միայն թուրքերենին և այլ լեզուներ է թափանցել բացառապես թուրքերենի միջնորդությամբ, սակայն արևմտյան լեզվաբան Ֆելիչեն Բրինզեն (Felicien Brinzeu) նշում է, որ կրկնությունների այս տեսակը շատ տարածված էր Օսմանյան կայսրության ոչ թուրքախոս բնակչության շրջանում, հատկապես հայերենում և հունարենում⁵: Փոխակերպված կրկնությունների էությունը կայանում է նրանում, որ բառ-արծազանքը առաջին բաղադրիչի հնչյունափոխված տարբերակը, հանդես է գալիս որպես երկրորդ բաղադրիչ⁶:

Եթե *փոխակերպված կրկնության* մեջ առաջին բաղադրիչը, այսինքն հիմնական բառը սկսվում է *ծայնավոր* հնչյունով, ապա բառ-արծազանքը սկսվում է *m-* հնչյունով, իսկ եթե այն սկսվում է բաղածայնով, ապա վերջինս փոխարինվում է *m-* հնչյունով: *Փոխակերպված կրկնությունները* ժամանակա-

Москва 1928, տես նաև А. Н. Кононов. Грамматика турецкого языка, Ленинград, 1941, с 188-190.

⁴ E. A. Moravcsik, Reduplicative constructions, Universals of human language, Vol. 3, California, Stanford University Press, 1978, p. 297-334.

⁵ F. Brinzeu, La Reduplication a m- initial, Istanbul, Üniversitesi Yayınları, 1943, p 508.

⁶ A. Göksel, C. Kerslake, Turkish a comprehensive grammar, London, 2005, p. 98-101.

կից թուրքերենում կազմվում են գրեթե բոլոր խոսքի մասերից, այդ թվում նաև նմանողական բառերից: Փոխակերպված կրկնություն կարող է կազմվել նաև հատուկ գոյականներից: Ի դեպ հատուկ գոյականներից կազմված այս կրկնավորի հնչյունափոխված երկրորդ բաղադրիչը գրվում է փոքրատառ: (Նշենք, որ թուրքերենում ազգություն մատնանշող բառերը գրվում են մեծատառ): Այսպես *at mat-ձի-մի, kitap mitap-գիրք-միրք, oğlan moğlan-տղա-մղա, İngiliz mingiliz-անգլիացի-մանգլիացի, Alman malman-գերմանացի-մերմանացի, Şamı mamı սոսիւ-Պամասկոսը և նմանատիպ բաներ մոռացավ, Allah mallah karıştırdı-Աստված մաստված խառնեց իրար:*

Ի տարբերություն թուրքերենի հայերենում նման կրկնավորները գրվում են գծիկով, առանձին դեպքերում նաև անջատ:

Որպես օրինաչափություն նշենք, որ թուրքերենում փոխակերպված կրկնությունների առաջին բաղադրիչը որպես կանոն չի կարող կազմվել ու հնչյունով սկսվող բառերից⁷:

Իսկ հայերենն այդ առումով ճկուն է. փոխակերպված կրկնությունները (կրկնավորներ) կարող են կազմվել տարբեր հնչյուններով սկսվող բառերից: Օրինակ *աման-չաման, մանր-մունր, մագ-մուգ, առոք փառոք, գիրք-միրք, տետր-մետր:*

Թուրքերենում *փոխակերպված* կրկնությունների երկրորդ բաղադրիչը կարող է սկսվել *k-* հչյունով: Օրինակ *pađır küldür-աղմուկ-աղաղակ, անկազմակերպ, tambur kümbür-գուռնա դիդլ*⁸: Այս կաղապարով կազմված կրկնությունները փոքրաթիվ են:

Փոխակերպված կրկնությունների առանձնահատկություններից ելնելով կրկնադիր բառ-արծագանքները դառնում են հնչյունական նույնություններ: Բացի այդ շատ բնորոշ է հանգավորումը, սակայն սա ևս օրինաչափություն չէ և կարող է խախտվել: Օրինակ

Ben Arabistanı hayal meyal biliyorum.-Ես Արաբիստանը շատ աղոտ եմ պատկերացնում:

Թուրքերենում կարելի է հանդիպել նաև *hayal mayal* ձևը: Ըստ Ռ. Ազանիհի կրկնություններում *a-*ի փոխակերպումը *e-*ի հնչյունական օրինաչափություն չէ, և սա պետք է դիտարկել որպես ծայնավոր հնչյունների դիրքային առանձնահատկությունների հետևանքով ի հայտ եկած բացառություն: *A>e*

⁷ А. М. Зарипова, Редупликация в английском и турецком языках, Вестник Челябинского государственного университета, Филология, Искусствоведение, N13 (91), 2007, с. 28.

⁸ V. Hanpoğlu, , Türk Dilinde İkilime, Ankara, 2. basım 1981, s. 119 .

անցումը հնարավոր է դարձել միջնալեզվային, ծայնորդ -յ հնչյունի առկայությամբ, եթե *hayal*⁹ հիմնական բառի մեջ *h-* հետնալեզվային (հազագային) հնչյունի պատճառով հնարավոր չէր անցումը, կապված չափազանց հետնային արտաբերման հետ, ապա երկրորդ բառ-արձագանքի մեջ երկչորթնային (հպական) *m-*ի առկայությամբ այդ անցումը դառնում է շատ օրինաչափ⁹:

Ժամանակակից թուրքերենում հանդիպում է նաև *փոխակերպված* կրկնությունների *քերական տարատեսակը*, որի ժամանակ հնչյունական կրկնության առաջին բաղադրիչի առաջին ծայնավոր հնչյունը նեղանում է, ընդ որում նեղացման գործընթացը տեղի է ունենում ոչ թե հնչյունական ինչ-ինչ գործոնների ազդեցությամբ այլ պայմանավորվում է տվյալ կրկնությունների առանձնահատկությամբ: Այս կրկնությունները ժամանակակից թուրքերենում մեծ թիվ չեն կազմում¹⁰: Հնչյունական կրկնության առաջին ծայնավոր լինում է կամ *ս* կամ *մ* կապված հնչյունի քմայնացումից և շրթնայնացումից: Իմաստաբանական առումով ոչ կարևոր երկրորդային բաղադրիչը, որն ըստ էության որևէ միտք չի արտայայտում, հանդես է գալիս հետադաս դիրքում: Այսպես *tek tük-mamnaslı, parçak parçak-շատ փոքրիկ, böcek bücek-միջատներ, ecis bücüş-տծև, անձև*:

Շրթնային ասիմիլյացիայի հետևանքով երբեմն կրկնության երկրորդ բաղադրիչի ծայնավոր հնչյունները նույնպես փոխվում են: Օրինակ *sarsık sursuk-տատանվող, օրորվող, şartsız şurtsuz-անպայման, karış kuruş- խառնի-ճաղանճ*:

Կրկնությունների *սղված* տեսակը ներկայանում է որպես արմատի կրկնության պատմական զարգացման արդյունք: Թուրք լեզվաբաններ Սաադեթ Չաղաթայը, Թալաթ Թեքինը, Գյուլսեն Սեվը, Քերիմե Ուսթյունովան, Մուսաֆա Գյոքչեօղլուն, հենվելով Մահմուդ Կաշգարիի «Թուրքերենի բառարան» -ի , թուրքական հայտնի էպոս Դեդե Զորբուրի, ինչպես նաև օրհոնյան աղբյուրների լեզվական նյութի վրա, և այլ թուրքական լեզուների հետ պատմա-համեմատական քննություն կատարելով նշում են, որ այդ կրկնությունները գտնվում են անցումային փուլում¹¹:

⁹ P. A. Агахан, *Ուշվաշխ.*, с.19.

¹⁰ Ş. Çoraklı, *Türkçenin Yaratma Gücü, İkillemeler*, A. Ü. Türkiyat Araştırmalar Enstitüsü Dergisi, Sayı 17, Erzurum, 2001, s.55-59.

¹¹ G. Sev, *Divanu Lugat'it Türk'te İkillemeler*, Türk Dili Dergisi, TDK yayınları, Ekim-2004, Sayı 634, s. 497-510. տես նաև՝ T. Tekin, *İkillemeler*, Orhon Yazıtları, Kul Tigin, Bilge Kagan, Tunyukuk, Simurg Yayınları, İstanbul, 1995, s. 15-17, տես նաև՝ S. Çağatay, *Uygurca Hendiadyonyoinler, Dil ve Tarih Fakültesi, Yıllık Çalışmalar Dergisi*, sayı 1. Ankara, 1978, s. 29-66, տես նաև՝ Z. K. Olmez, *Kutadgu Bilingde İkillemeler, Türk , Dilleri Araştırmaları*, Simurg

Per perışan-qoqqıladı, քրքված, Bis bütün-լրիվ:

Առավելապես այս կաղապարները կազմվում են բայ խոսքիմասից, օրինակ *bak bakalım-տեսնենք, git-gidelim-գնալիմք:*

Բերված օրինակները փաստում են, որ կրկնության միջոցով ձևավորված կառույցների ներսում տեղի են ունենում միաձուլումներ, որոնք, իրենց հերթին փոփոխության են ենթարկում կառույցի հնչյունական կառուցվածքը: Ինչպես նկատում են լեզվաբանները, այս երևույթը լեզվական երկարատև գործընթաց է, որի արդյունքում ի հայտ են գալիս համեմատաբար կայուն ձևեր¹²:

Մասնակի կրկնության միջոցով կազմված բարդությունները, ըստ սղված հնչյութների քանակի, բաժանվում են երեք խմբի՝ երկհնչույթ և եռահնչույթ և քառահնչույթ: Երկհնչույթ կրկնությունները բնորոշ են ձայնավոր հնչյունով սկսվող բառերին: Տվյալ դեպքերում երկրորդ բաղադրիչում որպես ներդիր ածանց հանդես է գալիս խուլ *p* բաղաձայնը: Օրինակ՝ *acı apacı- դառը-դառը, açık apaçık-բացեիքաց, aşık-apaşık-բացարձակ ակնհայտ, ucuz-upucuz-շատ էժան, uzun-upuzun-շատ երկար, ayır-apayır-առանձին:*

Եռահնչույթ կրկնություններում փոփոխության է ենթարկվում հիմնական բառի երրորդ հնչույթը: Որպես կանոն այդ հնչույթը լինում է բաղաձայն: Օրինակ՝ *bambaşka-լրիվ ուրիշ, basbayağı- ամենահասարակ, besbelli-ակնհայտ, bomboş-դափ-դատարկ,, büsbütün-ամբողջովին, capcanlı-խիստ կենսունակ çarçabuk-մի ակնթարթում շատ արագ, çirçirkin-շատ տգեղ,, dapdar-նեղ, dimdik-ուղիղ, dipdinc – կենսուրախ, dipdiri – կենսախիճնդ, dopdolu-լեփ-լեցուն, dosdoğru –ուղիղ, dîhizet, dupduru –մաքրամաքուր, dümdüz -ուղիղ, gepgeniş-շատ լայն, kapkalın-շատ հաստ, kapkara-սեփ-սև, kipkirmizi-կասկարմիր, kupkuru-չոր,փոփո, masmavi-կաս-կապույտ, mosmor – մուգ մանուշակագույն, pespembe-բաց վարդագույն, sapsarı- մուգ դեղին, simsicak –շատ տաք, simsıkı –շատ նեղ, simsiyah – սեփ սև, sopsoduk- շատ սառը, taptaze-թարմ, նոր, tertemiz-մաս-մաքուր, tostoparak -ամբողջովին կլոր, yemyeşil- մուգ կանաչ, yepyeni-նոր, yusuvarlak-կլոր , yumyumuşak-շատ նուրբ:*

Ռուս լեզվաբանների դիտարկումների համաձայն համեմատական քննությունը ցույց է տալիս, որ ի սկզբանե մասնակի կրկնությունների եռահնչույթ տարբերակում հնչյունային ցանկացած համադրությունների դեպքում բառի առաջին բաղադրիչում որպես վերջածանց հանդես է գալիս *-p* խուլ

Arıbasım, Ankara 1997, s. 16, տես նաև՝ K. Üstünoğlu, Dede Korkut Destanlarında Aralıklı İkilemeler, Türk Dili sayı. 557, s. 464-470.

¹² M. D. Erdem, Harezm Türkçesinde İkilemeler ve Yinelemeler Üzerine, Bilig Bahar, 2005 sayı 33, s 191.

բաղաձայնը: Սա նկատվում է թյուրքական բազմաթիվ լեզուներում: Մինչև օրս դրոգերեն, կունիկերեն, նոդայական լեզուներում նման կառույցում որպես վերջածանց օգտագործվում է *-p (n)* բաղաձայնը:¹³ Այսպիսի երևույթ առկա է նաև յակուտերենում, ինչն առավել հետաքրքրական է դառնում, եթե հաշվի առնենք, որ յակուտերենն առավել քան թյուրքական այլ լեզուներ, պահպանել է իր հին ձևերը¹⁴: Բաշկիրերենում, կարակալակերենում, օրինակ ի հայտ են գալիս նաև *-n, -n, -c* վերջածանցները, իսկ թուրքերենում և ադրբեջաներենում այս վերջածանցները չորսն են՝ *-p, -s, m, -r*¹⁵:

Թուրքերենում առաջին բաղադրիչի վերջին հնչյունի (մերդիր հնչյուն) ընտրությունը կատարվում է հաշվի առնելով տվյալ բառի հնչյունական առանձնահատկությունները: Որպես կանոն, առաջին բաղադրիչի վերջածանցը չի կարող համապատասխանել հիմնական բառի երրորդ հնչյունին: Հետևաբար, թուրքերենում չենք կարող հանդիպել այնպիսի կառույցների, ինչպիսիք են՝ *tem temiz, yen yenı*, ճիշտ տարբերակներն են *tertemzi - մաս-մաքուր yepyeni - նոր*: Միևնույն ժամանակ թուրքերենին բնորոշ չէ նաև, որ վերջածանցը համապատասխանի հիմնական բառի առաջին հնչյունին: Օրինակ թուրքերենում չեն կարող լինել նման կառույցներ *sissiyah, sissıcak*¹⁶ դրանց փոխարեն գործածական են *simsiyah - սեփ սև, simsıcak - շատ տաք* ձևերը:

Ներդիր հնչյունի ընտրության գործում հաշվի է առնվում նաև ուղղախոսության գործոնը, բարեհնչությունը: Օրինակ նույնարմատ *top* և *toparлак* բառերի մեջ, որտեղ հնչյունները համընկնում են ընդհուպ մինչև երրորդ հիֆույթը, օգտագործվում են տարբեր վերջածանցներ: Առաջինի մեջ ձայնեղ *-r tortop*, իսկ երկրորդի մեջ *-s tostoparлак*: Սա էլ իր հերթին պետք է, որ պայմանավորված լինի բառի մեջ *-r* ի առկայությամբ: Որոշ դեպքերում ներդիր ածանցը չի կարող որակական հատկանիշներով մոտ լինել նույնիսկ հիմնական բառի երրորդ հնչյունին¹⁷:

¹³ И. А. Батманов, Грамматика киргизского языка, Фрунзе 1940, с. 42, տես նաև՝ Н. К. Дмитриев, Грамматика кумыкского языка, Москва, 1940, с. 72, տես նաև՝ Н. А. Баскаков, Ногайский язык и его диалекты, Ленинград, 1940, с. 40, 71.

¹⁴ Н. Харитонов, Современный якутский язык, Якутск 1947, с. 90, տես նաև՝ С. В. Ястремский, Грамматика якутского языка, Иркутск 1900, с. 90.

¹⁵ Н. К. Дмитриев, Грамматика башкирского языка, Москва, 1948, с. 86, Н. А. Баскаков, Каракалпакский язык, Москва, 1952, с. 210-211.

¹⁶ D. Abik, (İsim1+ II + IU) (İsim2+ II + IU) Kurulusundaki İkilimler, Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi, Türkoloji Dergisi, Ankara 2010, s. 1-19.

¹⁷ Р. А. Аганун, Զգվ. աշխ., էջ. 11:

Օրինակները ցույց են տալիս, որ թուրքերենում սղված կրկնություններով կառույցներում աստիճանաբար դուրս են մղվում *-p* և *-d* ՝ի զուգամիտումները: Դրա հետ կապված որոշ դեպքերում *-p-* ն փոխարինվում է առաջնալեզվային *-s* ՝ով, իսկ երբեմն էլ *-m*-ով: Այսպիսով, *dopdolu, dopdogru* ձևերի մոտ կարող ենք հանդիպել նաև *dosdolu dosdogru* ձևերը: Երկու պայթականների զուգամիտումը չեզոքանում է նույնիսկ քառահնչույթ կրկնությունների պարագայում *düpdüz-düpedüz-dümdüz-կատարյալ ուղիղ*¹⁸:

Սղված կրկնությունները արտահայտում են ծայր աստիճան զգացականություն, հուզականություն: Այդ պատճառով էլ նման կառույցներում հիմնական շեշտը տեղափոխվում է բառի սղված հատվածի վրա, որն արտասանվում է հատուկ առոգանությամբ:

Խոսակցական լեզվում բարեհնչությունից ելնելով *սղված* կրկնություններում ներդրված բաղաձայն հնչյունը կրկնապատկվում է, օրինակ *ap-a-ak-մաքամաքուր, up-p-uzun-երկար-երկար, ip-p-issiz-ամայի, mas-s-mavi-կաս կապույտ*:

Մասնակի կրկնությունների բաղադրիչները, դրա սղված մասը և հիմնական բառը հանդես են գալիս որպես հնչյունական մեկ միավոր և արտասանվում է առանց դադարի: Դրա շնորհիվ, բաղաձայների առնմանությունից ելնելով, տեղի է ունենում դրանց միաձուլում: Օրինակ *dosdogru(ճիշտ, ուղիղ, շիտակ), düpedüz (ուղիղ հարթ), capcanlı (կենդանի), zapzayıf (թույլ տկար)*, հիմնական բառի առաջին բաղաձայնի ազդեցությամբ տեղի է ունենում նախորդող բաղաձայնների *-s* և *-p*-ի հնչեղացում, որտեղ հնչեղության աստիճանը կախված է անհատական արտասանությունից և խոսելու արագությունից:

Սղված կրկնություններից ածանցյալ ձևեր են նաև քառահնչույթ կրկնությունները, որոնց համար շատ բնորոշ են լրացուցիչ *-a* կամ *-e* ծայնավորի առկայությունը, այն ավելանում է առաջին բաղադրիչի վերջին վանկի բաղաձայնին:

Նեղ կամ լայն բաղաձայնի ընտրությունը բացառապես կապված է հիմնական բառի հնչեղությունից *sapasağlam-ողջ առողջ, yapayalnız-մեն մենակ, düpedüz-ուղիղ*:

Այն բառերում, որտեղ կիրառվում են և լայն, և մեղ ծայնավորները, ընտրությունը կատարվում է հաշվի առնելով հիմնական բառի առաջին վանկի ծայնավորի որակական հատկանիշները *lapataze*-թարմ:

¹⁸ V. Hatipoğlu, նշվ աշխ., էջ 18:

Քառահնչույթ կրկնությունը ժամանակակից թուրքերենում այդքան լայն կիրառություն չունի: Սովորաբար այն հանդես է գալիս որպես եռահնչույթ սղված կրկնությունից ածանցյալ ձև: Քառահնչույթ կրկնությունների մեջ առավել մեծ թիվ են կազմում *-p* հնչյունով կազմված կրկնությունները, առավել սակավաթիվ են *-s*, *-r* հնչյուններով կրկնությունները:

Իմաստաբանական առումով նկատվում են շատ անշան տարբերություններ: Ժամանակակից թուրքերենում հավասար կերպով տարածված են ինչպես *dardağın*, *dardağan*, *այնպես էլ darmadağın*-ցրված, անուշադիր *besbelli* և *besebelli* -*ակնհայտ ձեռքը*¹⁹:

Առանձին դեպքերում եռահնչույթ սղված կրկնությունների առաջին բաղադրիչին ավելանում է *-il* կամ *-i* ածանցը: Չնաբանական նման փոփոխությունը հանգեցնում է իմաստի առավել ուժգնացման *çiril çirplak* - *կատարելապես մերկ*, *siril siklam sirisiklam sirsikam* - *լրիվ բաց, քերտ քերտ* - շատ աղքատ:

Այս երևույթի հետ մեկտեղ ժամանակակից թուրքերենում կան մասնակի կրկնության բազմաթիվ դեպքեր, երբ *-il* ածանցն ավելանում է երկրորդ բաղադրիչին *Çirilçirplak* - *կատարելապես մերկ*, *-çirilçirpildak* - *կատարելապես մերկ*²⁰:

Բարդությունների բաղադրիչները կարող են համահնչյուն լինել հանգավորման կամ բաղաձայնության (ալիտերացիայի) միջոցով²¹: Բաղաձայնության առանձնահատկությունը կայանում է համարվող բաղադրիչների առաջին հնչյունների նմանության մեջ: Հանգը, ի տարբերություն բաղաձայնության, կարող է առաջանալ բառի հնչյունական կազմից անկախ, ածանցների կցման միջոցով, ինչի հետևանքով կարող է փոփոխության ենթարկվել նաև շեշտադրումը²²:

Հանգավորումը կարող է լինել ստույգ և մոտավոր: Նեղ ձայնավորները համահունչ են ցանկացած զուգակցություններում:

Մոտավոր հանգավորում կարող է առաջանալ այսպիսի հնչյունների օգնությամբ, որոնք արտաբերվում են միևնույն ձևով *m: n: s: ç z: st iç güç, düz*

¹⁹ Osman Nedim Tuna, Türkçede tekrarlar, Türk Dili ve Edebiyatı dergisi, c III, sayı 3-4, İstanbul, 1949, s. 15.

²⁰ Р. А. Аганин, *Նշվաշխ.*, էջ 15:

²¹ В. А. Гордлевский, Грамматика турецкого языка, Москва, 1928, с. 74.

²² Յ. Չ. Պետրոսյան, *Նշվաշխ.*, էջ 562:

sürüst, bayram seyrarı: Այս հանգավորման ժամանակ թույլատրելի են *ş: st* զուգադրությունները, եթե դրանք գտնվում են բառավերջում:²³

Հարադիր բարդությունների վանկային նույնացման գործընթացի ազդեցությամբ միշտ նախապատվությունը տրվում է այնպիսի կառույցների որոնց մեջ վանկերը նույն քանակի են: Նույն պատճառով կարող են տեղի ունենալ նաև շեշտային տեղաշարժեր: Օրինակ *sepet - կողով* բառը ունի ինքնուրույն գործածություն և շեշտը գտնվում է բառի վերջին վանկի վրա: Սակայն *evet - այո* բառի հետ համատեղ կիրառության դեպքում, որտեղ շեշտն առաջին վանկի վրա է, *sepet* բառի շեշտը տեղափոխվում է երկրորդ վանկի վրա, քանի որ այս պարագայում բառը հանդես է գալիս որպես բառ-արծագանք:

Evet, sepet söylemekle vaktimi geçirmeyiniz-Անհմաստ խոսակցություններով ինձ մի զբաղեցրու:

Այսպիսով, ժամանակակից թուրքերենի բառակազմության առավել ակտիվ և արդյունավետ միջոցներից մեկը արմատակրկնությունն է: Սա իր հերթին անշուշտ պայմանավորված է թուրքերենի կառուցվածքային առանձնահատկություններով: Ինչպես ցույց տվեց վերը կատարած քննությունը, թուրքերենի որոշ հնչյուններ ներուճակ են նոր արմատակրկնություններ կազմել: Դրանց որոշ կաղապարածները փոխառյալ են այլ լեզուներից, իսկ մյուս մասն էլ թյուրքական ծագման է: Կրկնության այս տեսակները պահպանել են իրենց կենսունակությունը թուրքերեն ժողովրդա-խոսակցական, ինչպես նաև գրական լեզվում: Կիրառվում են գեղարվեստական լեզվում հաղորդելով խոսքին առավել արտահայտչականություն, յուրահատուկ ոճ:

ROOT REPETITION TYPES OF MODERN TURKISH

In this article we have tried to present phonetic and structural manifestations one of the most productive types of word formation in modern Turkish language, which is root repetition. In modern Turkish root repetition is formed through full, transformed or partial reduplications. Here we have also presented the fact that some morphemes in modern Turkish are able to form new root repetitions. Some of those forms are borrowed from other languages, the other ones are of Turkish origin. Even nowadays this types of reduplications are still actual in spoken and literary Turkish language. This types of reduplications make speech more expressive.

²³ P. A. Агагин, *Նշվաշխ*, էջ 21: